

Փիլիսոփայական բարոյագիտութեան ամնչուած, վերոյիշեալ բազմաթիւ դրական հաստատումներու կողքին, հարկ է որոշ յստակութեամբ շեշտել, որ բարոյագիտութիւնը արգելքներու աղիւսակ մը կամ ցուցակ մը չէ երբեք, որմէ հասկնալի ըլլայ, թէ ի՞նչ կարելի է ընել եւ ի՞նչ չընել: Ան նաեւ կանոններու հաւաքածոյ կամ դրութիւն մը չէ: Բարոյագիտական որեւէ պարզ կամ խրթին հարց հարկ է հանգամանօրէն եւ որոշ մանրամասնութեամբ քննարկել ու քննախօսել:

Բարոյագիտութեան այս աշխատասիրութիւնը պիտի փորձէ վերոյիշեալ եւ այլ բազմաթիւ հարցերու պատասխանները գտնել:

Անշուշտ որ բարոյագիտութեան մասին այս *փիլիսոփայական ակնարկը* չի կրնար ամբողջական ըլլալ. թերեւս այս աշխատասիրութեամբ յառաջանան յաւելեալ եւ բոլորովին նոր հարցեր, ինչ որ յոյժ փափաքելի է: Այսուհանդերձ յուսալի է, որ այս աշխատասիրութիւնը օժանդակէ, աւելի մօտէն ծանօթանալու՝ բարոյագիտական զանազան հարցերուն, բազմաթիւ հասկացութիւններուն, համոզիչ հիմնաւորումներուն ու տարբեր տեսութիւններուն եւ այս միջոցով կազմելու՝ զուտ անձնական բարոյագիտական մտածողութիւնը կամ մտածելակերպը:



Ուսումնասիրելու համար փիլիսոփայական բարոյագիտութիւնը, աշխատասիրութեանս որպէս հիմք պիտի ծառայէ հետեւեալ կառոյցը.-

## **Մաս – 1**

### **Ներածութիւն – Introduction** (Էջ 21)

ուր արագ ակնարկով կը ներկայացուին՝ փիլիսոփայութիւնն ու փիլիսոփան, բարոյականութիւնը ու փիլիսոփայական բարոյագիտութիւնը, իրենց ընդհանուր գիծերուն մէջ:

## **Մաս – 2**

### **Բարոյագիտութեան պատմութիւն – History of Ethics** (Էջ 37)

ուր ժամանակագրական կարգով եւ փիլիսոփայութեան պատմութեան լոյսին տակ, կը ներկայացուին բարոյագիտութեան ընթացքն ու զարգացումը, հնադարեան ժամանակներէն մինչեւ մեր օրերը, ինչպէս նաեւ կը ներկայացուին՝ նշանաւոր բարոյագետ փիլիսոփաները եւ անոնց փիլիսոփայական ուղղութիւնները:

## **Մաս – 3**

### **Մետա-բարոյագիտութիւն – Meta-Ethics** (Էջ 126),

ուր կը ներկայացուին բարոյագիտութեան մակարդակային բաժանումները եւ կը մանրամասնուին լեզուա-վերլուծական կամ մեթոդական բնոյթի արտայայտութիւնները: